

ԹԱԹՈՒԼ ԶԱՎԵՆԻ ՍՅՈՒՆԻ

ՍՅՈՒՆՑԱՑ ՇԱՂԱՏ ՈՍՏԱՆԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վաղմշական ժամանակներից մինչ 9-րդ դարը Մեծ Հայքի Սյունիք նահանգի աշխարհիկ և հոգևոր կենտրոնը եղել է Մոկուք գավառի Շաղատ գյուղաքաղաքը, որը մասնագիտական գրականության մեջ նույնացված է Սյունիքի մարզի Շաղատ գյուղի հետ:

Սյունյաց ավելի քան 500-ամյա զանազան կենտրոնի խորհրդավոր լուծությունը, այսինքն՝ ժամանակակից Շաղատում հնագույն Շաղատը հիշեցնող պատմահնագիտական ստույգ արժեքների բացակայությունը և մյուս կողմից՝ պատմահնագիտական հուշարձանների անմասնադատ փառստությամբ աչքի ընկնող Սիսիան քաղաքի հին անվան անհայտ լինելը, սակայն, դրդեցին կասկածի ենթարկել իշխող տեսակետը և Սիսիան քաղաքի տարածքում փնտրել Սյունյաց պատմական ուստանը:

Հիշատակություններ պատմական Շաղատի վերաբերյալ

Պատմական Շաղատի վերաբերյալ առաջին վկայությունը տվել է հին հույն գիտնական Պտղոմեոսը (ծն. թ. անհտ. - մոտ մ. թ. 168 թ.): Նրա կազմած «Ասիայի երրորդ քարտեզում» Շաղատը նշված է «Սալատա» ձեռով¹: Այս վկայությունը հուշում է, որ 2-րդ դարում Շաղատը աչքի ընկնող բնակավայր էր և, ըստ երևույթին, հանդիսանում էր Սյունիների իշխանական տոհմի կենտրոնատեղին:

Հայ պատմիչներից պատմական Շաղատի մասին առավել ստույգ տեղեկություններ է թողել Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Իր «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում նա նկարագրել է 4-րդ դարում Սյունիքի իշխաններ Անդոկի և Արա որդի Բաբիկի գործունեությունը՝ կապված Շաղատ մայրաքաղաքի հետ:

Ըստ պատմիչի, Շաղատում էր գտնվում Սյունյաց աշխարհի Ս. Ստեփանոս Նախավկա Մայր եկեղեցին՝ մի «Քարակոփ չքնադաշեն եկեղեցի, որպիսի ճարտարապետական կառուցվածք ուրիշ ոչ մի տեղ չկար, այն ուներ «գմբեթն ու խորանքն չորեքկուսի, մի յարկ, մի տանիք և ոչ ուրոյն ուրոյն որպէս և այլ զաղատուսաշէն եկեղեցիք»²:

¹ Հայկական սովետական հանրագիտարան: Երևան, 1983, հ. 9, էջ 416 (քարտեզ):

² Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի:

5-րդ դարում, հայ դպրության սկզբնավորման ժամանակ, Մեսրոպ Մաշտոցի կողմից Սյունիքում բացվել են Հայաստանում առաջին քրիստոնեական դպրոցները: Դրանցից զարգացման ամենաբարձր մակարդակն ունեւ Սյունյաց վարդապետարանը³, որը գործեց 5-9-րդ դարերում: Ստ. Օրբելյանը Սյունյաց վարդապետարանի մասին գրում է, թե ինչպես որ «աթենացիքն ի մէջ Հոռոմոց և Յունաց ճոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ, յիսպամիացոց աշխարհին լատին և հելլեն դպրութեամբ, այսպէս և սոքա ի տաճա Թորգոմայ յաշխարհիս Հայոց»⁴:

Չնայած պատմիչը ուղղակի չի գշտւում վարդապետարանի գործելու կոնկրետ վայրը, սակայն կարելի է ընդունել, որ այն գտնվել է Սյունյաց հոգևոր կենտրոն Ծաղատում:

821 թվականին Ծաղատի վրա է հարձակվել արաբ զորավար Մրվանը: Ստ. Օրբելյանը գրում է. «Եւ բազում աւարովն եկեալ (Մրվանը - Թ. Ս.) ի Սիւնիս ամրանայ ի բերդագիւղն Ծաղատու և կամէր զայն ևս ապականել զգեղեցիկ աշխարհն Սիսական. և կուտեալ զգօրսն ի գաւառին Ծղկաց ի միմ տեղուք»⁵:

Այդ արշավանքի մասին հիշատակել է նաեւ Մ. Կաղանկատվացին: Նա գրում է. «Եւ ի նոյն ամի (821 թ. - Թ. Ս.) ասպատակեաց Սևադայ աշխարհաւերն Տաճիկ, որ Աստուանայ անուն ճանաչէր, ի սահմանս Հայոց. և յաւարի առեալ զաշխարհն ամենայն դառնայ ի Սիւնիս, և ամրանայ ի բերդատեղի աւանին Ծաղատու, որ է ի գաւառին Ծղկաց»⁶:

821 թ. Մրվանի արշավանքից Ծաղատը այնքան է տուժել, որ Սյունյաց գահերեց իշխան Վասակ Սյունին իր աթոռամիստը նույն թվականին Ծաղատից տեղափոխեց հարևան Վայոց Ձոր գավառի Եղեգիք ավան:

851 թվականը Ծաղատից Տաթև տեղափոխվեց Սյունյաց թեմի եպիսկոպոսա՝ Այդ քայլը թելադրված էր անվտանգության մկատառովներով:

Այսպիսով, Ծաղատը՝ վաղ միջնադարյան Հայաստանի հզորագույն մայրաքաղաքական տոհմի գահամիստը, Հայաստանի վարչա-քաղաքական, առևտրա-տնտեսական և հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը, 9-րդ դարի սկզբին կորցրեց

պոսի Սիւնեաց: Թիֆլիս, 1910, էջ 42: Ծարտարապետ է. Մելիքյանի կարծիքով, պատմիչը, շեշտելով շինության խորաններից գմբեթի արտասովոր ձևով միավորված, միաձավալ լինելու հանգամանքը, եկեղեցու ընդհանուր հորինվածքի մասին որևէ ակնարկ չի անում: «Չորեքլուսի» ածականը, գրում է է. Մելիքյանը, որը նշանակում է քառակողմ, քառանիստ, վերաբերվում է ոչ թե շինության քառաթև, չորս խորաններով կազմված խաչակերպ կառուցվածքին, այլ նրա խորանների ձևին: Մի հարկի ու տաճիքի ներքո մի քանի խորանների և մեկ գմբեթի ամփոփումն անհնար է, ուստի գմբեթը կարող էր միավորված լինել միայն մեկ, ակներևաբար ավագ խորանի հետ: Մելիքյան է., Սրահաձև տաճարների գմբեթավորումը, «Գիտություն և տեխնիկա», 1987, թիվ 5, էջ 44:

³ Նույն տեղում, էջ 133:

⁴ Նույն տեղում:

⁵ Օրբելյան Ստ., Նշվ. աշխ., էջ 158:

⁶ Կաղանկատվացի Մ., Պատմություն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 326: Ստ. Օրբելյանի նշած Մրվանը Կաղանկատվացու գրքում հիշատակված է Սևադա անվամբ:

իր երբեմնի դերն ու նշանակությունը և, ըստ երևույթին, շարունակում էր գոյություն ունենալ որպես արաբական իշխանության զինվորական և վարչական կենտրոն, որովհետև, ինչպես վկայում է Մ. Կադանկատվացին, արաբ զորավար Մովսեսը, «դառնալով Սյունիք, ամրացավ Օադատ ավանի բերդատեղում»:

Հ. Մամանդյանը գրում է, որ «... քաղաքները, որոնք խիստ տուժել էին արաբական արշավանքների ու պարբերաբար կրկնվող ապստամբությունների և կոնվների ժամանակ, ստացել էին այլ նշանակություն: Նրանք դառել էին արաբական իշխանության զինվորական և վարչական կենտրոնները և բնակեցված են եղել արաբներով ու դառել էին, գերազանցորեն, արաբական վետերանների գաղութներ»⁷:

Արաբական աղբյուրներում «Օադատ» անվան բացակայությունը հիմք է տալիս եզրակացնել, որ արաբները 9-13-րդ դարում Օադատը կոչել են արաբական անունով, ինչպես օրինակ, Դ-վինը կոչում էին Դաբիլ, Նախիջևանը՝ Նաշավա, Պարտավը՝ Բարդաս և այլն: Դառնալով արաբական զինվորական և վարչական գլխավոր հենակետը Սյունիքում, Սյունյաց զահանգիստ Օադատ ավանը արաբների կողմից, մեր կարծիքով, կոչվել է Սայսավան (հայերեն՝ Սյունի ավան կամ Սյունյաց ավան - Թ. Ս.), որի մասին իր աշխարհագրական բառգրքում հիշատակում է արաբ աշխարհագիր Յակուտ Ալ Համավին (1178-1229)⁸: Համաձայն նրա վկայության, այդ քաղաքը գտնվել է Առանի կողմերում, Բայլակահից (Փայտակարահից - Թ. Ս.) չորս օրվա ճանապարհի հեռավորության վրա⁹:

Խոսելով «Սյունիք», «Սիսական» և այլ տեղանունների ծագման վերաբերյալ, Հ. Հյուբշմանը գրել է, որ «Սիսականը այն անունն է, որ Սիւնիք Պարսից և ապա նաև Արաբացուց և Ասորուց բերնին մէջ կը կրեր: Սիւնիքը, և երկրորդ՝ արաբացի պատմագիրներն երկիրս կ'անուանեն Sisajan (հին պարսկ. Sisagan - միջ. պարսկ. Sisakan)»¹⁰:

10-րդ դարում Տաթևի վանքին տրվող հարկերի հին ցուցակում Մոլուկք գավառում նշված են Օադատը՝ 12 և Օադատ վանքը՝ 6 հարկաչափերով¹¹:

14-րդ դարում՝ 1378 թվականին, հիշատակվում է Օադատի գործող եկեղեցին՝ Ս. Գրիգոր անվամբ¹²:

Օադատի վերաբերյալ 15-17-րդ դարերում հիշատակություններ հայտնի չեն: Օադատ գյուղը նշվում է 1781 թ. Տաթևի վանքին տրվող հարկերի «Քյոթուկ» կոչվող ցուցակում¹³:

⁷ Մամանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ. Բ., Երևան, 1960, էջ 295:

⁸ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմող՝ Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 82:

⁹ Մեկ օրվա ճանապարհի մեծությունը հավասար է եղել միջին հաշվով 7-8 ժամվա ճանապարհի (35-40 կմ), Հայկական սովետական հանրագիտարան, Բ. 8, Երևան, 1982, էջ 679:

¹⁰ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 510:

¹¹ Հյուբշման Հ., Հին հայոց տեղյոյ անունները, Վիեննա, 1907, էջ 96:

¹² Ժ. Դ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 527:

¹³ Դավթյան Ծ. Բ., Սիսիանի բնակավայրերի պատմությունը, Երևան, 1997, էջ 15:

«Ծաղատ» անվան ստուգաբանությունը

Միջնադարյան Սյունիքի բազմաթիվ գյուղանուններ արտացոլում են բնական միջավայրը, տեղանքի գեոմորֆոլոգիական և ջրաբանական առանձնահատկությունները: Ասվածի հաստատումն են հանդիսանում, օրինակ, Ծղուկքի և Արանից անջատված Այլախ գավառի¹⁴ Ապարանից գետ, Գետակից, Մեծածոր, Մշկածոր, Բարունջ, Զկանարած, Բողոտի ջուր, Ուռական գետ, Գինական գետ գյուղանունները և այլն¹⁵: Ծաղատը նմանատիպ տեղանուններից է:

Այն կազմված է շաղ բառարմատով և հնագույն վերջածանցից սերած աստ տեղանվանակերտ մասնիկով, ինչպես օրինակ՝ բացատ, խորխորատ, հեղեղատ հնագույն հայերեն բառերը¹⁶:

«Ծաղ+ատ»-ը ծագում է շաղ «ցող. խոնավություն, թրջել, թացություն» արմատից և նշանակում է ջրով թրջված տեղ¹⁷:

«Ծաղատի» նախնական ձևը «սաղ+ատ»-ն է, որ նշանակում է ծանծաղուտ¹⁸ և առաջացել է հայերենում Ս>Ծ հայտնի հնչյունափոխությամբ, այնպես, ինչպես Սյունիքի Սոթք գավառում Սիսկայան դարձել է Ծիշկայա, Կովսական գավառում՝ Սիսկերտը դարձել է Ծիշկերտ, Ծղուկք գավառում՝ Սիսթափան դարձել է Ծիշթափա¹⁹:

«Ծաղատ» անվան վերոնշյալ ստուգաբանության օգտին են խոսում Ստ. Օրբելյանի՝ պատմական Ծաղատի բնական, աշխարհագրական պայմանների վերաբերյալ հաղորդած տեղեկությունները: Ըստ պատմիչի, Ծաղատը կառուցված է եղել

¹⁴ Կարծում ենք, որ Սյունիքի բաժանումը 14 գավառների, այդ թվում՝ Ծղուկքից Այլախի անջատումը, կատարել է ոչ թե Ստ. Օրբելյանը, այլ Արանից հետո մեկ ուրիշը՝ հարկացուցակի բնագրում ավելացնելով ևս երկու գավառ: Դեռևս 15-րդ դարի սկզբին, 1406-1408 թթ., Տաթևի համալսարանում սովորած Թովմա Մեծոփեցին գրում է Սյունիքի 12 գավառների բաժանված լինելու մասին (Մեծոփեցի Թ., Պատմություն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1960, էջ 14): Օրբելյանից բացի, ինչպես գրել է Թ. Հակոբյանը, «Այլախ գավառանունը չեն հիշատակում ո՛չ Արանից առաջ և ո՛չ էլ Արանից հետո եղած պատմիչներն ու աշխարհագիրները: Հարկացուցակում (խոսքը վերաբերվում է Ստ. Օրբելյանի աշխատությանը կից Տաթևի վանքին տրվող հարկերի հին ցուցակին - Թ. Ս.) Ծղուկքը երկու մասի բաժանելը հավանաբար եղում էր եկեղեցական աշխարհագիր կատարելու և հարկեր հավաքելու հարմարություններից, այնպես որ նա քաղաքացիական իմաստով վարչական միավոր չէր» (Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 43):

¹⁵ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 510-511:

¹⁶ Իշխանյան Ռ., Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Երևան, 1989, էջ 55, նաև՝ Պետրոսյան Ս., Հացագզիների պաշտամունքի արտացոլումը Ծարայի ավանդադրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 199:

¹⁷ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1977, հ. 3, էջ 487-488:

¹⁸ Նշվ. աշխ., հ. 4, էջ 163:

¹⁹ Ումառյան Ս., Սյունիքը դիցարան, Երևան, 1981, էջ 18:

մի լճակի ափին «և դարձեալ թաղք մի Ծաղատայ ի լերինն ծովուն լեզր ծովակի միոջ... և գորտքն ի ծովուն ըստ սովորութեան իրեանց բարբառոյ լնոին լաւէժ աղաղակելով...»²⁰: Ըստ երևույթին, «ծովակը» ճահճաման, գորտերով լիքը գետա-մերձ լճակ է եղել:

Ծաղատի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու արևմտյան կողմում, մոտ «մի ձայն տալու հեռավորության» վրա, գտնվել է մի ճահճաման փոս, որը կրում էր «Աճճատու փոս» անունը: Սյունյաց պատմիչը նկարագրել է, թե ինչպես Մայր եկեղեցու չար և դաժան մշակներից մեկի «ոտքերը կապ են ընկել» Աճճատու փոսում, և չի կարողացել քայլել²¹:

Ինչպես երևում է, պատմական Ծաղատը կառուցված է եղել ջրաշատ, մակերևութային ջրերով, ճահիճներով և ծանծաղուտներով առատ գետաճեղատում:

Սաղատձոր-Ծաղատ

Ներկայիս Ծաղատ գյուղը գտնվում է Սիսիան քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք, Սիսիան-Նախիջևան խճուղու ձախ կողմում, Որոտան գետի աջ ափին:

Գյուղի բնակիչների մի մասը եկել են Պարսկահայքից: Այդ մասին Ղ. Ալիշանը գրում է. «Յետ հազարամեայ մոռացութեան անուան տեղույս ի գիրս, լայտնեցաւ ի գալստեան գաղթականին Հայոց ի կողմանց Խոյի այսր, յամի 1829, իբրև տանց երեսնից, առ որս իջևանեալ ազաւ Եղիա Սմիտի Ամերիկացի քարոզիչ (ի 6-7 նոյեմբերի, 1830) գիշերըս երկու, մինչչև էր նոցա կանգնեալ եկեղեցի, բայց ունէին երեց մի, այլ ոչ ինչ յիշէ զշինէ կամ զաւերոյ տեղոյն»²²:

Ծաղատի մոտ 100 տեղամուկներն առաջացել են 1829 թվականից հետո: Այդ են վկայում նրանց ստուգաբանությունն ու բովանդակությունը:

Պատմական Ծաղատի տեղադրության վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքները իրարամերձ են:

Ղ. Ինճիճյանը պատմական Ծաղատը նույնացրել է Երնջակ գավառի Ծոռոթ գյուղաքաղաքի հետ: Նա գրում է. «Այս Ծաղատ թուի լինել նոյն՝ որ այժմ այլալուծեամբ կոչի Ծոռոթ, զի բաց ի մերձաւորութենէ անուանց՝ նաև դիրքն ընդհանրապէս համաձայնին: Այժմեան Ծոռոթ չէ ինչ հեռի ի Նախճաւանայ. սոյնպէս և Ծղուկք գաւառ յորում էր Ծաղատ՝ սահմանակից էր Նախճաւանայ. ի Ծաղատ էր եկեղեցի յանուն սրբոյն Ստեփաննոսի. Նոյնպէս եւ ի Ծոռոթ գտանի Սուրբ Ստեփաննոս, այժմ փոխարկեալ ի մատուռն»²³:

²⁰ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 44:

²¹ Նույն տեղում, էջ 45:

²² Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 212:

²³ Ինճիճյան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 281:

Թ. Հակոբյանը ենթադրում է, որ պատմական Ծաղատը գտնվել է Աերկայիս Ծաղատից հյուսիս²⁴, իսկ բերդը գտնվել է գյուղի արևելյան մասում բարձրացող երկու բլուրների շրջանում²⁵:

Ա. Ղարազոյզյանը գրում է, որ Ծաղատի շրջակա գյուղերի բնակիչների վկայությամբ գյուղից հարավ-արևմուտք գտնվող Քոչաբերդ լեռան գագաթին անցյալում բերդ է եղել: Իր կարծիքով, այստեղ բերդ չի եղել, այլ «եղել է ոչխարների փառախ, որի մասին է վկայում նաև լեռան Աերկայիս Քոչաբերդ անունը»²⁶:

Մեր համոզմամբ, իրոք Քոչաբերդի գագաթին բերդ է կառուցվել: Սակայն բերդի տեղադիրքը և տարածքի մեծությունը ցույց են տալիս, որ այն զառանգիստ բերդ չի եղել և ունեցել է զուտ ռազմա-պաշտպանական նշանակություն:

Ստ. Օրբելյանը իր «Պատմություն» մեջ Տաթևի վանքի հին հարկացուցակում Սյունիքի Այլախ գավառի գյուղերի թվում հիշատակում է Սաղատաձոր (ծանձաղուտի ձոր – Թ. Ա.) գյուղը²⁷, որն ունի Ծաղատ անվան մույնանուն ծագումը և նշանակությունը: Սաղատաձոր գյուղի տեղադրության վերաբերյալ մատենագրական աղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ չկան ստույգ տեղեկություններ:

«Սաղատաձոր» տեղանվան ստուգաբանությունը մեզ բերում է այն համոզման, որ Աերկայիս Ծաղատը հանդիսանում է հնագույն Սաղատաձոր գյուղը:

Ներկայիս Ծաղատում Սուրբ Ստեփանոս Նախավկա և Սուրբ Գրիգոր եկեղեցիներից ոչինչ չի պահպանվել: Գյուղում կանգուն է 1848 թվականին բազիլիկ ոճով կառուցված Ս. Գևորգ եկեղեցին:

Սյունիքի ավելի քան 500-ամյա մայրաքաղաքը հիշեցնող պատմահնագիտական ոչ մի արժեք չկա Աերկայիս Ծաղատում: Պատմական Ծաղատն ու ժամանակակից Ծաղատ գյուղը իրար են առնչվում միայն անվան մույնությամբ: Այս իրողությունը պարտադրում է մեզ նախկին Ծղուկք գավառի այլ վայրում փնտրել աշխարհիկ և հոգևոր զառանգիստ Ծաղատը:

Միսիան քաղաքի տեղանունները և պատմահնագիտական հուշարձանները

Ծղուկք գավառի տարածքում պատմահնագիտական տեսանկյունից ամենահարուստ, աշխարհագրական և ռազմապաշտպանական առումով բարեհարմար վայր է Աերկայիս Միսիանի ափսեաձև ընդարձակ գոգահովիտը: Հաշվի առնելով այս հանգամանքը, նպատակահարմար է պատմական Ծաղատը փնտրել նախ և առաջ Միսիան քաղաքի տարածքում:

²⁴ Հակոբյան Թ., Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 139:

²⁵ Նշվ. աշխ., էջ 140:

²⁶ Ղարազոյզյան Ա., Ակունքներ, «Որոտան», Միսիան, 1988, թիվ 48:

²⁷ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 511:

Սիսիանը նախկինում կրում էր «Ղարաքիլիսա» անունը: 1935 թվականին ՀԱՍՀ Գերագույն տոմարի միջոցով հրամանագրով Ղարաքիլիսան վերանվանվեց Սիսավան, իսկ 1940 թվականին՝ Սիսիան: «Սիսիան» անունը մինչև 1940 թվականը կրում էր Սիսիանի շրջանի Հացավան գյուղը:



Սիսավանի տաճար (VII դար)


«Ղարաքիլիսա» նշանակում է «սև եկեղեցի»: Այդ անունը պայմանավորված է եղել գյուղում գտնվող Սյունի վանքի (Ա. Գրիգոր Լուսավորիչ տաճար) առկայությամբ:

Ղարաքիլիսա գյուղը, մեզ հայտնի տվյալներով, առաջին անգամ հիշատակվում է Կարա-Կոյունլու Հասան-Ալիի 1468 թ. հրովարտական Տաթևի վանքին պատկանող գյուղերի ցուցակում²⁸: Այստեղ Ղարաքիլիսան նշված է որպես Թուման-Ենախչևան վիլայեթի Սիսաջան մահիալի գյուղ:

²⁸ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հ. Ա., Հրովարտական, պր. Ա. (ԺԵ-ԺԶ դդ.), կազմող՝ Հ. Դ. Փափազյան, Երևան, 1956, էջ 48:

«Ղարաքիլիսա» անունը հետևանք է 15-րդ դարի սկզբին Մոլուքում թուրքմենական ցեղերի տիրապետության: Կարևոր է սակայն պարզել, թե ինչպես էր կոչվում այդ հին հայկական բնակավայրը վաղ միջնադարում, մախքան թուրք քոչվորների հայտնվելը:

Մոլուք գավառ թուրքական էթնիկ տարրի ներթափանցումը և հետագայում մատակցության անցնելը ուղեկցվել է գավառի հայկական տեղանունների փոփոխությամբ: Այն կատարվում էր կա՛մ տեղանվան իմաստի թարգմանությամբ, կա՛մ իշխողի լեզվի հնչյունային օրենքներին համապատասխան այլափոխմամբ, կա՛մ էլ մոր անուն տալով: Սիսիանի գոգահովտի 80-ից ավելի տեղանունների գերակշիռ մասը օտարահունչ է: Դրանցից պատմագիտական արժեք են ներկայացնում հատկապես հետևյալ՝ «Ջորաքարեր», «Ծակ քար», «Ծահրիստան», «Սյունի բերդ», «Ծահրափոս», «Մատաղաբլուր», «Իշխանի կամուրջ», «Սյունի վանք» և «Բլկանոց» (տե՛ս քարտեզը) տեղանունները:



«Ծահրիստան»: Թյուրքերեն բառ է, հայերեն նշանակում է «քաղաքատեղ»: Այսպես է կոչվում Սիսիան քաղաքի ներկայիս Գայի թաղամասը և մայիսին օդանավակայանի արևելյան մասը ընդգրկող բնակատեղին²⁹: Ակամայից տեղանունը հուշում է այստեղ ինչ-որ մի քաղաքի գոյության մասին:

²⁹ Հասարթյան Մ., նշվ. աշխ., էջ 132:

Մ. Հասարթյանի կարծիքով, այդ տարածքում գտնվել է մի ավան՝ «Սյունի» անունով, իսկ «Օահրիստանը» հանդիսացել է Սյունի ավանի «շահաստանը»³⁰:

Մ. Հասարթյանի կարծիքը, սակայն, հիմնավոր չէ, որովհետև՝

ա) հայ մատենագիր և վիմագիր աղբյուրներում վաղ միջնադարյան Մղուկք զավառում «Սյունի» անվամբ գյուղաքաղաք կամ ավան չի հիշատակվում,

բ) միջնադարյան Հայաստանի խոշոր քաղաքները քաղկացած էին երեք մասից՝ միջնաքերդից, շահաստանից և արվարձաններից: Օահաստանը, բուն քաղաքը, իր զրաված տարածքով մի քանի անգամ գերազանցում էր միջնաքերդին: Այստեղ էին գտնվում շուկա-հրապարակները, խանութները, կրպակներն ու արհեստանոցները³¹: Սիսիանի «Օահրիստանը» չէր կարող լինել շահաստան, քանի որ դարեր շարունակ տեղարմիկ հայր կապահաներ, սերնդե-սերունդ կփոխանցել ոչ թե քաղաքի մի թաղամասի, այլ հենց ողջ քաղաքի անունը:

Օահրիստանին մերձակա թյուրքերեն տեղանունները հայկական տեղանունների ուղղակի թարգմանություններն են, ինչպես օրինակ, Մատաղաբլուր-Կուրբան քափա, Իշխանի կամուրջ-Խանքյուրփի, Խաչաղբլուր-Խաչբուլաղ և այլն:

Օահրիստանի տարածքում կա մի հնագույն եկեղեցի՝ ավերակ վիճակում: Այն ունեցել է կղմինդրե ծածկ, կառուցվել առանց կրաշաղախի, խոշոր, վատ հղկված քարերով: Պահպանվել են 2,2 մետր հաստությամբ հիմնապատերը: Հատակագծի չափերն են՝ 12x15 մետր: Եկեղեցու շուրջը մինչև 1960-ական թվականները եղել են դամբարաններ, որոնցից պահպանվել են միայն հարավային կողմի դամբարանները: Այստեղ կան միջնադարյան երկու խաչքարեր:

Ամենայն հավանականությամբ, եկեղեցին վաղ միջնադարյան քրիստոնեական կառույց է: Չնայած եկեղեցու պեղման աշխատանքները կիսատ են մնացել³², սակայն նրա հիմնապատերի դասավորություննից երևում է, որ այն, Սյունյաց պատմիչի նկարագրած Օաղասի Ս. Ստեփանոս Մայր եկեղեցու մասն, ունեցել է գմբեթախորան կառուցվածք:

«Սյունի քերդ» (Սյունյաց քերդ): Այսպես է կոչվում Օահրիստանից արևելք, Որոտանի և նրա աջակողմյան Սիսիան վտակի միախառնման վայրում, մի բարեհարմար դիրք ունեցող սարառստի վրա գտնվող քերդը: Այն այժմ ավերակ է: Պարսպի երեք մետր լայնությամբ հիմնապատի մնացորդները լավ են երևում Որոտանի կիրճի կողմից:

Բերդը կառուցվել է հելլենիստական դարաշրջանում և հանդիսացել, հավանաբար, Սյունյաց զահակալ իշխանների նստավայրը, Սյունիք նահանգի վարչական-կառավարական կենտրոնը: Այդ են վկայում քերդի աճաղախ հիմնապատերի մնացորդները և նրանից արևմուտք ընկած մի բլրի մոտ հայտնաբերված իշխանական տոհմական դամբարանը:

³⁰ Նույն տեղում:

³¹ Հակոբյան Թ., ԳԶՎ. աշխ., էջ 11:

³² Պեղման աշխատանքները իրականացվել են 1987 թ., հնագետ Բ. Սաղոյանի ղեկավարությամբ:

Սյունի բերդի գահանիստ լինելը հաստատվում է մեկ Մղուկք գավառի բերդաշինական համակարգի ուսումնասիրությամբ³³:

Սյունիքի կարևոր առևտրական ճանապարհները մինևույն ժամանակ ունեցել են ռազմա-ստրատեգիական մշակակություն, ուստի մրանց երկայնքով կառուցվել են գուտ ռազմական բերդեր և պահակակետեր:

Մղուկքի բոլոր 12 բերդերը կազմել են պաշտպանական գծային ուղղագիծ համակարգ: Մղուկքի բերդերի պաշտպանական համակարգի հիմնական մպատակն է եղել պաշտպանել Սյունի (Ծաղատի - Թ. Ս.) բերդը³⁴: Թշնամին որպեսզի գրավեր գահանիստ Սյունի բերդը, պետք է պաշարեր այդ ուղղության վրա գտնվող բոլոր բերդերը:

Վաղ միջնադարում Սյունի գահանիստ բերդից արևմուտք առաջացել է Ծահրիստան-Ծաղատը: Այդ են ապացուցում հնագիտական, դրամագիտական տվյալները և տեղանունների ստուգաբանությունը:

1986 թվականին Ծահրիստան-Ծաղատի տարածքում, Սյունի բերդի արևմտյան կողմում, խոշոր դրամական գանձ հայտնաբերվեց: Գանձի բազմաթիվ և բազմատեսակ դրամները պատկանում էին 6-9-րդ դարերին: Այն աղբյուրագիտական առումով գնահատվեց որպես կարևորագույն պատմական վկայություն³⁵: Պարզվեց, որ Սյունի բերդի շուրջ ստեղծված Ծահրիստան-Ծաղատ բնակավայրը 9-րդ դարի սկզբին ապրանքափոխանակության և դրամաշրջանառության ասպարեզում միջազգային կապեր է ունեցել և առևտրի պահանջները բավարարելու նպատակով այստեղ դրամների հատման փողերանոց է եղել³⁶:

Բերդի արևմտյան կողմի հարթակի վրա, հագիվ մշմարելի դամբարանադաշտում գտնվել են հնագույն, վաղ և ուշ միջնադարյան դամբարաններ: Դամբարաններից մեկը ունեցել է հնագիտական երեք շերտ³⁷:

Քանի որ ակնհայտ է, որ Սյունի բերդին կից բնակավայրը պատմական Ծաղատ գյուղաքաղաքն է՝ Սյունյաց ուստանը, ուստի Սյունի (Սյունյաց) բերդը մույն Ծաղատի բերդն է: Հիմա հասկանալի է, թե ինչու Ստ. Օրբելյանը Սյունիքի մշակավոր 23 բերդերը թվարկելիս չի մշել Ծաղատի բերդը: Դրա փոխարեն մա հիշատակել է Սյունի բերդը³⁸:

Նախքան 821 թվականը, երբ Սյունյաց աշխարհիկ գահանիստը Ծաղատ գյուղաքաղաքից տեղափոխվեց Վայոց Ջորի Եղեգիք վան, Ծաղատում ապրած աշխարհիկ և հոգևոր առաջնորդները հայ մատենագիր և վիմագիր աղբյուրներում հիշատակված են ոչ թե ծննդավայրի, բնակավայրի անվամբ («Ծաղատեցի»), այլ որպես կանոն՝ տոհմի անվամբ («Սյունի»)՝³⁹: «Ծաղատեցի» անունը հանդիպում է

³³ Զարյան Ա. Ա., Սյունիքի ամրոցաշինության որոշ սկզբունքների մասին: ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 224-232:

³⁴ Զարյան Ա. Ա., մշվ. աշխ., էջ 225:

³⁵ Մուշեղյան Խ., Սյունիքի դրամական գանձը, ՊԲՀ, 1989, թիվ 2, էջ 123:

³⁶ Նույն տեղում, էջ 131:

³⁷ Հասարթյան Մ., մշվ. աշխ., էջ 176:

³⁸ Օրբելյան Ստ., մշվ. աշխ., էջ 13:

³⁹ Օրինակ, «Սյունի» տոհմանունն էր կրում Սյունյաց վարդապետարանի ուսուցչապետ,

միայն 821 թվականից հետո: Օրինակ, 874 թվականին Սևանի կղզու եկեղեցիների և Օռդվազա վանքի օծման արարողությամբ ներկա է եղել Արտավազո Օաղատենցի իշխանը⁴⁰:

«Շահնափոս»: Այս տեղանունը վկայում է, որ Ղարաքիլիսա-Սիսիանը արաբական և մոնղոլական տիրապետության շրջանում եղել է քաղաք և կատարել վարչական կենտրոնի դեր: Հայտնի է նաև, որ մոնղոլները նվաճումների ժամանակաշրջանում որևէ քաղաք գրավելով՝ այնտեղ քոչվոր ազնվականներից նշանակում էին քաղաքապետ՝ «շահնա»⁴¹:

1240-50-ական թթ. թաթարական զորքի գլխավոր Բաչու Նոյինը մատում էր Սիսիանում⁴²:

«Մատաղարյուր»: Շահրիստան-Օաղատում Սյունի քերդից արևմուտք գտնվող մի քլրի անվանումն է: Մատաղարյուրի հարավահայաց կողմում 1970 թվականին պատահաբար հայտնաբերվել է հելլենիստական դարաշրջանի (2-րդ դար մ.թ.ա.) բացառիկ հարուստ իշխանական ստորերկրյա դամբարան, որը, հավանաբար, պատկանել է Սյունիների մախարարական տոհմին⁴³: «Մատաղարյուր» անունը պայմանավորված է իշխանական դամբարանի գոյությամբ:

«Իշխանի կամուրջ»: Որոտան գետի վրա, Սյունի քերդի և Շահրիստան-Օաղատի մոտ, վաղ միջնադարում կառուցված կամրջի անվանումն է⁴⁴: Կամուրջը կառուցված է եղել սրբատաշ բազալտից, ունեցել երկաթե միացումներ: Կամրջի վերջին մնացորդները Որոտանը բշել-տարել է 1920 թվականին՝ զարնաճային զորեղ վարարման ժամանակ⁴⁵:

«Սյունի վանք» (Սբ. Գրիգոր Լուսավորիչ տաճար): Սիսիան քաղաքի հյուսիսարևմտյան դարվանդին է գտնվում Սյունի վանքը՝ կառուցված 555-584 թթ. ժամանակահատվածում⁴⁶, հեթանոսական տաճարի տեղում: Ստ. Օրբելյանի վկայությամբ՝ «առաջև վանացն ի մէջ քաղցրահայեաց մէլդանին դնեն իշխանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ և յամենայն ատուր ասեն գային ի ժամ պատարագին»⁴⁷:

Հայաստանի կրոնական, գիտական, մշակութային նշանավոր գործիչ, 734-735 թթ. Սյունյաց եպիսկոպոս Տեր Ստեփանոսը, որը սակայն ծննդով Դիլիճի ավագ քահանայի որդին էր (Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 132):

⁴⁰ Նույն տեղում, էջ 175:

⁴¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 616:

⁴² Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. վ. Առաքելյանի, Երևան, 1982, էջ 265:

⁴³ Խաչատրյան Ժ., Դիակիզումը Հայաստանում (մ.թ.ա. 2-րդ - մ.թ. 3-րդ դդ.), «Լրաբեր» հաս. գիտ., Երևան, 1975, թիվ 2, էջ 69:

⁴⁴ Մ. Հասարայանը կամուրջը վկայակոչել է «Ջարե» անվամբ, որը նորաթուխ անուն է (Հասարայան Մ., նշվ. աշխ., էջ 132): Կամրջի իսկական պատմական անունը «Իշխանի կամուրջ»-ն է, որ տարածված է Ղարաքիլիսա-Սիսիանի տեղաբնիկների շրջանում:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Սյունի Թ., Երբ է կառուցվել Սիսիանի Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարը, «Էջմիածին», 1997, թիվ Ժ, էջ 87:

⁴⁷ Օրբելյան Ստ., նշվ. աշխ., էջ 338:

Պատմիչի այս վկայությունը հիմք ընդունելով, Ղ. Ալիշանը գտնում էր, որ Ծաղատի վանքը նույն Սյունի վանքն է⁴⁸: Նրա կարծիքով, «այսպիսի ընդհանուր տոհմական անուն վայել է այն վանաց՝ որ առ երի գահանիստ տեղում կայցե»⁴⁹: Ղ. Ալիշանը, սակայն, Ղարաքիլիսայի (Սիսիանի) վանքը անվանելով «Ս. Հովհաննես»⁵⁰, ենթադրում էր, որ Սյունի վանքը կառուցված է եղել ներկայիս Ծաղատ գյուղում:

Ծաղատի և Սյունի վանքերի նույնության վերաբերյալ Ղ. Ալիշանի ենթադրությունը հիմնավորվում է նաև Ս. Օրբելյանի հետևյալ վկայություններով.

ա) 8-րդ դարում, Սյունիքի գյուղերի տաճարների և վանքերի միջև գերադասության-առաջնության խնդրով ծագած վիճաբանության առթիվ, պատմիչը հիշատակում է Սյունիքի 5 առավել ճշանակոր վանքերը, որոնց թվում Սյունի վանքը բացակայում է, իսկ Ծաղատի վանքը և գյուղը ճշված են⁵¹:

բ) Տաթևի վանքին տրվող հարկերի հին ցուցակում (10-րդ դար) Ծղուկք գավառի 75 բնակավայրերի անվանացանկում Սյունի վանքը կրկին բացակայում է, իսկ Ծաղատի վանքը և Ծաղատ բնակավայրը ճշված են⁵²:

գ) «Պատմության» ԿԲ գլխում Սյունյաց աշխարհի գործող 30 վանքերը և միաբանությունները թվարկելիս, Ստ. Օրբելյանը Տաթևի և Թրանահատի վանքերից հետո հիշատակում է Սյունի վանքը, իսկ Ծաղատի վանքի մասին՝ լռում⁵³:

Բացի այդ, արդեն ասվել է, որ 14-րդ դարում Ծաղատում գործող եկեղեցին, Սյունի վանքի նման, կրում էր Ս. Գրիգոր Լուսավորչի անունը:

Ինչպես ճշեցինք, «Ծաղատ» ճշանակում է «ջրով թրջված տեղ» և արտահայտում տեղանքի՝ մակերևութային ջրերով առատ լինելը: Հետևյալից պատմաաշխարհագրական դիտարկումը ցույց է տալիս Սիսիան քաղաքի ջրաբանական պայմանների և տեղագրության համապատասխանությունը պատմական Ծաղատի բնական պայմանների վերաբերյալ Սյունյաց պատմիչի նկարագրություններին:

Սիսիան քաղաքի տարածքը խիստ առատ է մակերևութային ջրերով: Գոգահովտով հոսում է Որոտոն գետը: Ընդամենը 6-7 տասնամյակ առաջ, հատկապես գարնանային վարարումների օրերին, Որոտանը հունից դուրս գալով՝ հեղեղում էր աջափնյա տարածքները մինչև 100 մետր լայնությամբ՝ գոյացնելով ճահիճներ, ջրափոսեր: Եթե դրան զումարենք այն, որ Որոտանի ձախափնյա թեքություններում Սյունիքի հրաբխային բարձրավանդակում սնվող ստորերկրյա ջրերը, աղբյուրների տեսքով քաղաքի տարածքում ելք ունենալով, գոյացրել են ճահճոտ տեղանք, ապա

⁴⁸ Ալիշան Ղ., ճշվ. աշխ., էջ 212:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ 19-րդ դարի 90-ական թվականներին Ղարաքիլիսա-Սիսիանի եկեղեցու հին, իսկական անունը հայտնի չէր: Եկեղեցին կոչում էին Ս. Հովհաննես: Անվանի վիճագրագետ Ս. Բարխուդարյանը 1958 թ. եկեղեցու պատին եղած արձանագրությունների հիման վրա ճշտորեն պարզեց հուշարձանի անունը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ», կամ ուղղակի՝ «Սյունի վանք» (Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիճագրության, հ. 2, Երևան, 1960, էջ 85):

⁵¹ Օրբելյան Ստ., ճշվ. աշխ., էջ 48-49:

⁵² Նույն տեղում, էջ 510:

⁵³ Նույն տեղում, էջ 338-340:

ավելի հասկանալի կդառնա, թե ինչու է այս վայրը շաղատ (ջրով թրջված տեղ) անվանվել:

Հազարավոր տարիների ընթացքում լեռնային Որոտանի ջրերը խորքային էրոզիայի միջոցով քայքայել, մաշել ու ձևափոխել են գետի հունը, իջեցրել գետահովտի հատակը: Հետևապես, պատմական Ծաղատի «ծովակը» գտնվել է Սիսիանի իշխանի կամրջի մոտ և հանդիսացել Որոտանի ջրերով սնվող, գորտերով լիքը, ճահճաման գետամերձ լճակ, որին կից բարձունքին (այդ վայրը այժմ գերեզմանոց է - Թ. Ս.) կառուցված է եղել գյուղաքաղաքի մի թաղը:

Պատմիչի հիշատակած «Աճանառու փոսը» ճահին է եղել և գտնվել է Ծահրիստան-Ծաղատի հնագույն եկեղեցուց արևմուտք, որտեղ ընդերքից բխող աղբյուրների ջրերն առայսօր ճահին են գոյացնում:

Սյունիքի գահաձիստ կենտրոն Ծաղատի՝ Սիսիան քաղաքի տարածքում գտնվելու օգտին է խոսում Ստ. Օրբելյանի ևս մեկ նկարագրությունը, ըստ որի՝ 6-րդ դարում, երբ մահացել էին Սյունյաց իշխանը և հոգևոր տերը, իշխանի այրու՝ Սահակիա տիկնոջ միջնորդությամբ Հայոց Մուշե Ալլաբերեցի Կաթողիկոսը (կղթ. 526-534) հայրապետական ճոխությամբ գալիս է Սյունյաց գահաձիստ կենտրոն:

«Իսկ ի մերձեմալն ի գահ իշխանաց ի Սիմին՝ անտառոքն առաջի ընթանալին»⁵⁴: Սահակիա տիկինը, իր որդու, ազատագունդ բոլոր հեծյալների, քահանաների և տաճարների հետ ընդառաջ է ելնում, դիմավորում կաթողիկոսին. «և մեծաձայն աղաղակաւ հնչէին, գոչէին գերզս օրհնութեան այնքան, մինչ լի լինէր փորակ գաւառին իբրև յորտմամէ ամպոց: Եւ այնպէս փառատրութեամբ տարեալ իշուցանէին ի խորանն արքունական, և մատուցանէին ի վերայ ոսկեթել և մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանացն, ի տեղին, որ կոչի Կից վտակաց»⁵⁵:

Պատմիչի հիշատակած «Կից վտակաց» վայրը՝ Սյունիքի իշխանների գահատեղին, Որոտան մայր գետի և նրա աջակողմյան, ներկայումս Սիսիան կոչվող վտակի միախառնման տեղն է, որտեղ կառուցված է Սյունի (Ծաղատի) բերդը:

Օրբելյանը «վտակ»⁵⁶ բառը գործածել է «առու, գետակ» (հոսող ջուր - Թ. Ս.) նշանակությամբ և այն որևէ կապ չունի «վտակ» հասկացության ժամանակակից ֆիզիկա-աշխարհագրական մեկնաբանության հետ: «Կից վտակաց» վայրի անվան մասին Ղ. Ալիշանը գրել է. «Անունը այդ ի դէպ գա միութեան երկուց ջրոցն»⁵⁷: Բացի այդ, 6-րդ դարում չկար «գլխավոր (մայր) գետ» ժամանակակից աշխարհագրական ըմբռնումը: Միջին դարերում Որոտանը միաժամանակ մի քանի անուն էր կրում: Օրինակ, 10-րդ դարում գետը վերին հոսանքում կոչվել է Զկնարած⁵⁸, Սիսիանի (Ծաղատի) զոգահովտում՝ Ապարանից գետ⁵⁹, իսկ կիրճով հոսելիս՝ Որոտան⁶⁰:

⁵⁴ Նույն տեղում, էջ 74:

⁵⁵ Նույն տեղում:

⁵⁶ Աճառյան Հր., Աշխ., հ. 4, էջ 350:

⁵⁷ Ալիշան Ղ., Աշխ., էջ 214:

⁵⁸ Օրբելյան Ստ., Աշխ., էջ 262:

⁵⁹ Նույն տեղում, էջ 510:

⁶⁰ Նույն տեղում, էջ 202:

Տեղի՞ն է մշել, որ «Կից վտակաց» վայրի մասին պատմիչի մկարագրության մեջ Օաղատ անվան բացակայությունը պատճառ է դարձել բազմաթիվ ուսումնասիրողների կողմից մկարագրության տարրերեցումների և 6-րդ դարում Սյունյաց ոստանի տեղադրության վերաբերյալ իրարամերժ կարծիքների դրսևորման:

Ինչ վերաբերվում է պատմիչի մկարագրած «փորակին»՝ գավառի ձորին, որտեղ օրհներգողների ձայնն ամպի որոտի մման արձագանքում էր, ապա այն ամենայն հավանականությամբ Որոտանի կիրճն է՝ մերկայիս Ծաքե գյուղի մոտ:

Այսպիսով, վարկածային բնույթի սույն հոդվածի խնդրո առարկայի քննարկման սահմաններում, տպագիր սկզբնաղբյուրների և պատմագիտական գրականության հիման վրա փորձ արվեց ցույց տալ, որ պատմական Օաղատը գտնվել է մերկայիս Սիսիան քաղաքի տարածքում: 4-9-րդ դարերում, մախքան Սյունյաց աշխարհիկ և հոգևոր գահանիստը Օաղատից տեղափոխվելը, Օաղատի և՛ բերդը, և՛ վանքը, և՛ վարդապետարանը կոչվել են «Սյունի» տոհմանվամբ՝ շեշտելով իրենց տոհմական պատկանելիությունը և մահանգական մշանակությունը:

821-ից հետո Օաղատը դարձել է արաբական զինվորական և վարչական կենտրոն՝ Սայսավան անունով: 9-րդ դարում Բյուզանդիայի հետ առևտրական հարաբերությունների ընդհատումով և միջազգային առևտուրը դեպի Կուր գետի ավանը փոխանցելու հետևանքով, Օաղատ-Սայսավանը դարձել է Նախիջևան-Պարտավ ճանապարհի հանգույց: Սյունի (Օաղատի) բերդի արևմտյան կողմում հայտնաբերված խոշոր դրամական գանձը ցույց է տալիս, որ 9-րդ դարի սկզբին այդ բնակավայրը ապրանքափոխանակության և դրամաշրջանառության ասպարեզում միջազգային կապեր է ունեցել և առևտրի պահանջները բավարարելու մպատակով այստեղ դրամահատարան է եղել:

1236 թ. Սյունիքը մվանել են մոնղոլ-թաթարները:

1385 թ. Ծղուկքը ենթարկվել է Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանի, իսկ 1387 թվականին՝ Լենկթեմուրի ավերիչ ասպատակությունների: Ենթադրում ենք, որ Օաղատ-Սայսավան քաղաքը իր Սյունի բերդով ավերվել է հենց այդ ժամանակահատվածում, որից հետո, մեզ հայտնի տվյալներով, 15-րդ դարում ավերված քաղաքից ոչ հեռու գտնվող բնակավայրը սկսել է կրել «Ղարաքիլիսա» անունը: Այդ ենվկայում Սիսիանի գոգահովտի պատմահնագիտական հուշարձանները, մատենագրական աղբյուրները, տեղանունները և պահպանված ավանդազրույցները:

Ներկայիս Օաղատը գտնվում է Սիսիանի գոգահովտում, 12 կմ հեռու պատմական Օաղատից: Պատմության մեջ քիչ չեն մման դեպքերը: Օրինակ, մերկայիս Արտաշատը պատմական Արտաշատից հեռու է գտնվում 10 կմ⁶¹, իսկ մերկայիս Կապանը Սյունյաց թագավորանիստ Կապանից 17 կմ⁶²:

Ինչ վերաբերվում է մերկայիս Օաղատ գյուղի անվանը, ապա մեր խորին համոզմամբ, ինչպես վերը մշեցիմք, առաջացել է «Սաղատնոր» գյուղանունից, որը ժամանակի ընթացքում հայտնի Ս>Ծ հնչյունափոխության արդյունքում դարձել է «Օաղատ»:

⁶¹ Հակոբյան Թ., մշվ. աշխ., էջ 129:

⁶² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986, հ. 1, էջ 494: